Ագրոլրատու

ՓԵՏՐՎԱՐ 5 - 17 2015 Թ. ԹԻՎ 2 (2057)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ս/թ. փետրվարի 5-ին ՀՀ կառավարությունն, իր երեք որոշումներով, հաստատել է 2015թ. գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման, գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի և ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերը:

Մասնավորապես, դիզելային վառելանյութը շահառուներին է վաճառվելու մեկ լիտրը 350 դրամով, ազոտական պարարտանյութի մեկ պարկը՝ 50 կգ քաշով՝ 6 հազար, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մեկ պարկը՝ 50 կգ քաշով՝ 7 հազար դրամով: Ընդգծելով, որ գյուղատնտեսության զարգացումը ՀՀ կառավարության առաջնահերթություններից է, և այս համալիր ծրագիրը դրա վկայությունն է, վարչապետ Հովիկ Աբրահամյանը հանձնարարել է ՀՀ գյուղատնտեսության նախարարին՝ անձամբ վերահսկել վառելանյութի և պարարտանյութի ներկրումն ու տրամադրումը գյուղացիներին:

Պետք է ներգրավել նաև տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը, մարզպետներին՝ խնդիրներին օպերատիվ լուծում տալու համար: Եվ քանի որ, ըստ մասնագետների, այս տարին սակավաջուր է լինելու, վարչապետն ասել է, որ ՀՀ նախագահի մոտ պատկան մարմինների հետ քննարկվել է գարնան գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստվելու հարցը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՋԱԿՑԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Կոտայքի մարզպետարանում կայացել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի քննարկումը, որին մասնակցել են ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը, ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրեն Գ. Խաչատրյանը, մարզպետարանի պաշտոնատար անձինք, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառի ներկայացուցիչներ:

Աշխատանքային քննարկման ընթացքում ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենը ներկայացրել է հիշյալ ծրագրի բովանդակային ուղղությունները, միևնույն ժամանակ տեղեկատվություն տրամադրել ծրագրի հիմնական բաղադրիչների և նպատակային շեշտադրումների վերաբերյալ:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մարզի մի շարք համայնքների արոտավայրերի ջրարբիացման աշխատանքներ, ինչպես նաև ներդնել համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգեր: Ծրագրի իրականացման արդյունքում՝ նախատեսվում է մարզի գյուղացիական տնտեսություններին աջակցել համապատասխան գյուղտեխնիկայով և գործընթացի իրականացման համար անհրաժեշտ միջոցներով:

Առաջարկվող ծրագիրը նպատակ ունի համայնքներում բարձրացնել անասնապահության, հատկապես՝ կաթնատվության և մթերատվության արդյունավետությունը, ավելացնել մսուրային շրջանի համար կուտակվող անասնակերի քանակը, նպաստել գյուղամերձ և հեռագնա դեգրադացված արոտների բարելավմանը, արդյունավետ կառավարել արոտները, գանձվող արոտավճարներից, ավելացնել համայնքային բյուջեների մուտքերը, ինչպես նաև ավելացնել գյուղական տնտեսությունների եկամուտները ստացված անասնապահական արտադրանքից:

Աշխատանքային քննարկման ավարտին՝ մարզպետը կարևորել է ծրագրի նշանակությունը, հայտնել մարզպետարանի հետ համագործակցության պատրաստակամություն և վստահեցրել, որ մարզի համայնքների համար ծրագիրը կունենա դրական նշանակություն:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին ընդառաջ կազմակերպված մարզային խորհրդակցությունների շրջանակում, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հերթական այցն է կատարել Վայոց ձորի մարզ:

Խորհրդակցությանը ներկա էին՝ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սամվել Գալստյանը, ՀՀ ԳՆ գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանը, ջրային ոլորտի պատասխանատուներ, համայնքապետեր, այլ պաշտոնատար անձինք: Նախարար Սերգո Կարապետյանն իր ելույթում նշել է, որ թեև նախորդ տարի մարզի ագրարային ոլորտի որոշ ճյուղերում դրական տեղաշարժեր գրանցվել են, սակայն մի շարք խնդիրներ դեռևս մնում են չլուծված, ինչպես օրինակ՝ վարելահողերի օգտագործման ցածր մակարդակը: Մարզում առկա 16199.5 հեկտար վարելահողերից, 2014 թվականի օպերատիվ տվյալներով, մշակվել է ընդամենը 4684 հեկտարը (28.9%): «Պետական աջակցության ծրագրերի շնորհիվ, վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը հանրապետությունում վերջին տարիներին էականորեն բարձրացել է: Հարկավոր է գործուն քայլեր ձեռնարկել այս հարցում Վայոց ձորի մարզում ևս առաջընթաց ապահովելու ուղղությամբ», - նշել է Սերգո Կարապետյանը:

Անդրադառնալով մարզում մթերումների գործընթացի կազմակերպման աշխատանքներին՝ նախարարն ընդգծել է, որ եթե խաղողի մթերման գործընթացն անցնում է սահուն և առանց խնդիրների, ապա պտուղ-բանջարեղենի մթերման հարցում առկա են որոշակի դժվարություններ, քանի որ մարզում մթերում իրականացնող գործող ընկերություններ չկան: Այս կապակցությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարը կարևորել է մարզի միակ պտուղ-բանջարեղենի վերամշակման ձեռնարկության՝ Եղեգնաձորի պահածոների գործարանի վերագործարկման անհրաժեշտությունը: Նախարարը, նշելով որ դեռևս շատ անելիքներ կան բուսաբուծության ոլորտում, միևնույն ժամանակ համոզմունք է հայտնել, որ բոլոր նախադրյալներն առկա են՝ կրկնապատկելու, անգամ եռապատկելու արտադրության ծավալները:

↳ 2

ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, մարզային այցելությունների շրջանակում, այց է կատարել Սյունիքի մարզ: Մարզում նախարարի առաջին կանգառը՝ Խնձորեսկ համայնքում էր, որտեղ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հետ միասին, մասնակցել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից և Համաշխարհային բանկի աջակցությամբ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի (2011-2016 թթ.) շրջանակներում հիմնված անասնաբուժական և գյուղատնտեսական սպասարկման կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը:

«Սա արդեն երկրորդ անասնաբուժական կենտրոնն է, որը շահագործման է հանձնվում այս ծրագրի շրջանակում, և մենք առաջիկայում նախատեսում ենք հանրապետության բոլոր մարզերում նմանատիպ կենտրոններ հիմնել: Կենտրոնը մարզի անասնապահության զարգացմանն ուղղված կարևոր օժանդակություն է տեղի ֆերմերներին և առաջարկում է բարձրորակ խորհրդատվական ծառայություններ, ինչն, անկասկած, մեծապես կնպաստի գյուղացիական տնտեսությունների գործունեությունն առավել արդյունավետ և նպատակային կազմակերպելուն», - մասնավորապես նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարը: Նախարարը հավելել է, որ այս կենտրոնների տեխնիկական և մասնագիտական կարողությունները թույլ են տալիս դրանք վերածել տարածաշրջանում մասնագիտական զարգացմանն ու բիզնեսի աջակցմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր իրականացնող կենտրոնների, ինչպես նաև ընդգրկում են մատուցվող ծառայությունների լայն շրջանակ, այդ թվում՝ անասնաբուժական ծառայություններ, հիվանդությունների կանխարգելում և բուժում, արհեստական սերմնավորման ծառայություններ, անասնաբուժական դեղորայքի, անասնաբուժական և անասնապահական սարքավորումների և պարագաների վաճառք, խորհրդատվություն և ուսուցողական դասընթացներ:

↳ 2

Ագրոլրատու
Փետրվար 5 - 17, 2015 թ.
թիվ 2 (2056)

1 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Կարևորելով մարզում գյուղատնտեսության զարգացումը՝ նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է մարզպետին, ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ, կազմել գյուղատնտեսության ոլորտի զարգացման եռամյա ծրագիր և առաջնորդվել դրանով:

Նախարարի խոսքով՝ 2014 թվականին Վայոց ձորի մարզում հաջողությամբ իրականացվել է կենդանիների համարակալման, հաշվառման և անձնագրավորման փորձնական ծրագիրը, որը կայուն հենք կդառնա ՀՀ ողջ տարածքում՝ գյուղատնտեսական կենդանիների համընդհանուր հաշվառում իրականացնելու համար: Կարևորելով այս ծրագրի շրջանակում ձեռք բերված արդյունքները՝ նախարարը հավելել է, որ անհրաժեշտ է ապահովել գործընթացի շարունակականությունը: Սերգո Կարապետյանն իր խոսքում շեշտել է անասնապահության ոլորտում առկա դրական միտումները: Նա նշել է, որ չնայած ձեռքբերումներին, մարզում մեծ ներուժ կա անասնապահության զարգացման համար, և հնարավորությունները թույլ են տալիս քառապատկելու գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, որին կնպաստի նաև «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը: Մարզում արոտավայրերի ծանրաբեռնվածությունը կազմում է 23 տոկոս, մինչդեռ հանրապետությունում միջին ցուցանիշը կազմում է 51 տոկոս:

Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանն իր հերթին ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվելիք «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագիրը (CARMAC 2), նախատեսվում է ընդգրկել նաև Վայոց ձորի մարզը: Ծրագրի առաջին՝ «Համայնքի արոտավայերի և անասնապահության կառավարման համակարգեր» բաղադրիչի հիմնական նպատակն է՝ աջակցել ընտրված անասնապահական ուղղվածություն ունեցող լեռնային և սահմանամերձ համայնքներին, որտեղ անասնապահությունն ապրուստի հիմնական միջոց է հանդիսանում: Ծրագրի «արժեքային շղթայի զարգացման» բաղադրիչի ներքո նախատեսվում է ապահովել՝ կաթի, մսի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի արտադրության ոլորտներում շուկայահանվող (իրացվող) և արտահանվող արտադրանքի ծավալային աճ, բարելավել ներքին շուկայի պահանջարկը և ավելացնել գյուղատնտեսական մթերքի արտահանման ծավալները միջազգային շուկա:

Խորհրդակցության ավարտին՝ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով պարգևատրվել է Գնդեվազ համայնքի թռչնաբուծական ֆաբրիկայի տնօրեն Կարեն Միրզոյանը, իսկ ոլորտի մի խումբ այլ ներկայացուցիչների հանձնվել են շնորհակալագրեր:

Այցի շրջանակում նախարարը եղել է նաև Արենի համայնքի այգիներում, հետևել է ծառերի էտման աշխատանքների ընթացքին, զրուցել գյուղացիների հետ:

ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Նախարարը շրջել է նորաբաց կենտրոնում, ծանոթացել տեխնիկական հնարավորություններին և մատուցվող ծառայություններին:

Այնուհետև ՀՀ գյուղատնտեսության նախարարը և Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանն ուղևորվել են Գորիսի քաղաքապետարան, որտեղ մասնակցել են գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպչական հարցերի քննարկման նպատակով հրավիրված մարզային խորհրդակցությանը: Վերջինիս մասնակցում էին նաև ՀՀ ԳՆ գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթևոսյանը, համայնքապետեր և ոլորտի այլ պատասխանատուներ: Անդրադառնալով նախորդ տարվա ընթացքում մարզում գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքներին՝ նախարարը նշել է, որ մարզում առկա է անասնաբուծության զարգացման ընդարձակ ներուժ և անհրաժեշտ է միայն համապատասխան քայլեր ձեռնարկել ինչպես տավարի, այնպես էլ ոչխարների և այծերի գլխաքանակի ու մթերատվության ավելացման ուղղությամբ: Կարևորելով մարզում անասնապահության ճյուղի զարգացումը՝ նախարարն ընդգծել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի (CARMAC 1) դրական արդյունքները: Նախարարի խոսքով՝ ծրագրի շրջանակում մարզում հիմնվել են թվով 17 գյուղացիական կոոպերատիվներ, տրամադրվել են 24 անիվավոր տրակտոր և 100 այլ սարքավորումներ:

Նշենք, որ ծրագիրը ֆինանսավորում է ձեռքբերվող գյուղտեխնիկայի արժեքի 80 %-ը, իսկ 20%-ը տրամադրում է կոոպերատիվը՝ պայմանով, որ գյուղտեխնիկան սպանալուց հետո, 4 տարիների ընթացքում կոոպերատիվն իր հաշվին

կուտակում է գյուղտեխնիկայի արժեքի 30%-ի չափով գումար, որը կարող է օգտագործվել նոր գյուղտեխնիկա գնելու համար: Նախարարի դիտարկմամբ՝ մարզում դեռևս բարձր է գյուղտեխնիկայի մաշվածության աստիճանը: Այս խնդրի լուծման նպատակով պետությունը տնտեսավարող սուբյեկտներին տրամադրում է տեխնիկա՝ ուղղակի վաճառքի, ինչպես նաև լիզինգի միջոցով, տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով, 20 տոկոս կանխավճարով և 6 տարի մարման ժամկետով: Սերգո Կարապետյանն ընդգծել է, որ պետությունը, գյուղացիական տնտեսություններին օժանդակություն ցուցաբերելու նպատակով, այս տարի ևս հետևողականորեն շարունակում է սերմացուների, դիզելային վառելիքի և պարարտանյութերի տրամադրման ծրագրերը, ընդ որում՝ դրանք կտրամադրվեն նախորդ տարվա գներով:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել է նաև ոռոգման աշխատանքների պատշաճ կազմակերպման հարցը: Ոլորտի պատասխանատուների հավաստմամբ՝ այս պահին վերջին աշխատանքներ են տարվում համակարգը նախապատրաստելու ուղղությամբ՝ մարտից 1-ից գյուղացիական տնտեսություններին կայուն ջրամատակարարում ապահովելու նպատակով: Այս համատեքստում նախարարը հատկապես կարևորել է հանրապետությունում կաթիլային ոռոգման համակարգի ներդրմանն ուղղված քայլերը և փոքր ջրամբարների շինարարությունը: Նախարարն անդրադարձել է նաև Սյունիքի մարզում անտառկառավարման ոլորտում առկա հիմնախնդիրներին՝ կարևորելով ապօրինի անտառահատումների դեմ տարվող պայքարի ու այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումների նկատմամբ առավել հետևողական մոտեցում որդեգրելու անհրաժեշտությունը: Խորհրդակցության ավարտին՝ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով պարգևատրվեց Սյունիքի մարզի ֆերմեր Գառնիկ Շալունցը, իսկ ոլորտի մի խումբ այլ ներկայացուցիչների հանձնվեցին շնորհակալագրեր:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՈՌՈԳՄԱՆ ՍԵԶՈՆԻ ԸՆԹԱՑՔԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այց է կատարել Արարատի մարզ՝ ոռոգման սեզոնի նախապատրաստման ընթացքում իրականացվող աշխատանքներին անձամբ հետևելու նպատակով: Նախարարին ուղեկցել են Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրենի պաշտոնակատար Ֆելիքս Մելիքյանը և այլ պաշտոնատար անձինք:

Այցի շրջանակում նախարարն այցելել է Քաղցրաշենի, Գոռավանի, Վեդիի, Արմաշի պոմպակայաններ, հետևել Նարեկ համայնքի հեղեղատարի և Դվինի ջրանցքի մաքրման աշխատանքներին, եղել «Ձախ ճյուղ» ջրանցքի գլխամասում: Նախարարի այցելության պահին Քաղցրաշենի պոմպակայանում ընթանում էին նորոգման աշխատանքներ՝ ոռոգման սեզոնի բացմանն այն ամբողջությամբ աշխատունակ վիճակի բերելու նպատակով: Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրենի պաշտոնակատար Ֆելիքս Մելիքյանի խոսքով՝ պոմպակայանի հիմնանորոգումը հնարավորություն կտա շրջակա համայնքներին անցնել ինքնահոս ոռոգման՝ զգալիորեն կրճատելով ջրի կորուստները՝ միևնույն ժամանակ խնայելով շուրջ 500 մլն դրամ:

Այնուհետև ՀՀ գյուղատնտեսության նախարարն ուղևորվել է Նարեկ համայնք, հետևել հեղեղատարի մաքրման աշխատանքներին: Նախարարը եղել է նաև Դվինի ջրանցքում, որտեղ նույնպես աշխատանքները եռուն ընթացքի մեջ էին: Ֆելիքս Մելիքյանի զեկուցմամբ, այս տարի ջրանցքների մաքրման աշխատանքներն ավելի վաղ են սկսվել, և դրանք արդեն իսկ ամբողջությամբ ավարտվել են ցածրադիր հատվածներում (Տավուշ, Արմավիր, Արագածոտն, Սյունիք)՝ վստահեցնելով, որ սահմանված ժամկետներում՝ մինչև մարտի 1-ը, կիրականացվեն նաև բարձրադիր հովիտների մաքրման աշխատանքները: Դվինից նախարարն ուղևորվել է դեպի Գոռավանի և Վեդիի պոմպակայաններ, եղել է «Ձախ ճյուղ» ջրանցքի գլխամասում, որը սպասարկում է մարզի 5 համայնքների, հետևել է իրականացվող նախապատրաստական աշխատանքների ընթացքին և զրուցել աշխատակիցների հետ: Պատասխանատուները վստահեցրել են, որ աշխատանքներն ընթանում են բնականոն հունով, առանց խնդիրների և, արդեն իսկ մարտի 1-ից, անհրաժեշտության դեպքում, իրենք պատրաստ կլինեն ոռոգման սեզոնին:

Արարատի մարզում նախարարի այցելության վերջին կանգառն Արմաշի ավտոմատ ինքնակարգավորող, թվայնացված պոմպակայանում էր, որը հիմնանորոգվել է «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակում և այժմ սպասարկում է Արմաշ և Սուրենավան համայնքների շուրջ 1800 հեկտար ոռոգելի հողատարածքներ: «Հաշվի առնելով ընթացիկ տարվա եղանակային պայմանները՝ հավանական է, որ գարնան գյուղատնտեսական աշխատանքները նախատեսվածից ավելի շուտ սկսվեն, ուստի մենք ձեռնարկում ենք բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի պատշաճ կերպով իրականացվեն ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքները, և համակարգը առաջին իսկ պահանջի դեպքում պատրաստ լինի գյուղացիական տնտեսություններին ապահովել ոռոգման ջրով: Նախարարությունը խիստ հետևողական է գտնվելու այս հարցում, և այդ նպատակով պարբերաբար իրականացվելու են մշտադիտարկումներ»,- իր խոսքում նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարը հավելել է, որ կայուն ջրամատակարարում ապահովելու նպատակով, ընթացիկ տարում նախատեսվում է հանրապետությունում գույքագրել նաև բոլոր չշահագործվող խորքային հորերը՝ անհրաժեշտության դեպքում, դրանք նույնպես աշխատունակ վիճակի բերելու և ջրի հավելյալ պաշարներ ապահովելու համար:

Նախարարը հիշեցրել է, որ ոռոգման ոլորտի կազմակերպությունների կողմից շահագործվող մի շարք ջրային համակարգերի ամենամյա նորոգումների կատարման, ոռոգման համակարգում հրատապ լուծում պահանջող աշխատանքների իրականացման և ոռոգման սեզոնն արդյունավետ կազմակերպելու նպատակով կառավարությունն այս տարի շուրջ 1 մլրդ դրամ է հատկացրել ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամբարների, գլխամասային կառուցվածքների, ջրանցքների, պոմպակայանների և այլ ջրային համակարգերի ամենամյա կապիտալ նորոգումներն իրականացնելու համար:

Ագրոլրատու
Փետրվար 5 - 17, 2015 թ.
թիվ 2 (2056)

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գրիշա Բաղիյանը մասնակցել է փետրվարի 3-5-ը Երևանում ընթացող «Արևելյան Եվրոպայում խոզերի աֆրիկյան ժանտախտի էկոլոգիայի և համաճարակաբանության մասին հանրային իրազեկում, վերահսկման և կանխարգելման նպատակով ուսուցման տրամադրում, մեթոդների և ռազմավարությունների իրականացում» TAP-A1 տարածաշրջանային ծրագրի մեկնարկին նվիրված աշխատաժողովին:

Աշխատաժողովը կազմակերպվել է Հայաստանում կենսաբանական ոլորտում ներգրավման համագործակցային ծրագրի (ԿՈՆՀԾ) շրջանակում, որն իրականացնում է ԱՄՆ-ի պաշտպանության դեպարտամենտի սպառնալիքների նվազեցման գործակալությունը՝ համագործակցելով ՀՀ կառավարության հետ: Ծրագրի նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարությանը մեր երկրի անասնաբուժության և առողջապահության ոլորտները Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիմնական սկզբունքներին համապատասխանեցնելու հարցում, ինչը կնպաստի Հայաստանում հատուկ վտանգավոր պաթոգենների հայտնաբերման, ախտորոշման և արձագանքման համակարգերի հզորացմանը:

Հանդես գալով ողջույնի խոսքով՝ Գրիշա Բաղիյանը բարձր է գնահատել Հայաստանում, ծրագրի շրջանակներում, ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ հատկապես առանձնացնելով «Խոզերի աֆրիկյան ժանտախտի համաճարակաբանական կարգավիճակը և հսկողությունը Հայաստանում՝ ԱՄ-3» և «Արևելյան Եվրոպայում խոզերի աֆրիկյան ժանտախտի էկոլոգիայի և համաճարակաբանության մասին հանրային իրազեկում, վերահսկման և կանխարգելման նպատակով՝ ուսուցման տրամադրում, մեթոդների և ռազմավարությունների իրականացում՝ TAP-A1» ծրագրերը:

«ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը կարևորում է կենսաբանական գիտահետազոտական համագործակցային ծրագրերի իրականացումը, որոնց շրջանակում լուրջ վերապատրաստում են անցնում տարբեր ոլորտի մասնագետներ՝ լաբորատոր, դաշտային, գիտական և այլն՝ ձեռք բերելով մասնագիտական բարձր գիտելիքներ և հմտություններ: Սա թույլ կտա բարձրացնել մեր երկրում խոզերի աֆրիկյան ժանտախտի հայտնաբերման և դրա դեմ պայքարի արդյունավետությունը»,- նշել է Գրիշա Բաղիյանը:

Ներկայումս «Խոզերի աֆրիկյան ժանտախտի համաճարակաբանական կարգավիճակը և հսկողությունը Հայաստանում ԱՄ-3» ծրագիրը եզրափակիչ փուլում է: Ուսումնասիրությունների արդյունքները հնարավորություն կընձեռեն ստանալ հավաստի տվյալներ՝ խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության համաճարակաբանական կարգավիճակի վերաբերյալ, և այդ հիվանդության նկատմամբ սահմանել արդյունավետ հսկողություն:

Գ. Բաղիյանը կարևորել է նաև մեկնարկվող TAP-A1 ծրագիրը, որը համարվում է տարածաշրջանային ծրագիր, որի իրականացմանը կմասնակցեն Վրաստանի, Ուկրաինայի և Ղազախստանի Հանրապետությունների համապատասխան կառույցները: Ծրագիրն ուղղված է խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության վերահսկման, կանխարգելման և համաճարակաբանության վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով ուսուցման կազմակերպմանը:

Ծրագրի շրջանակներում կմշակվի խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հսկողության և պայքարի ընդհանուր ռազմավարություն, որն էլ իր դրական ազդեցությունը կունենա ողջ տարածաշրջանի համար:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գրիշա Բաղիյանը, «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրով իրականացվող միջոցառումների շրջանակում, աշխատանքային այց է կատարել Արագածոտնի մարզ՝ անասնաբուժության ոլորտի խնդիրները քննարկելու նպատակով: Խորհրդակցությանը մասնակցում էին մարզպետի տեղակալ Մուշեղ Աբգարյանը, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի անասնաբուժության տեսչության պետ Հովհաննես Մկրտչյանը, «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Ավագյանը, ինչպես նաև գյուղապետեր, անասնաբույժներ և տեսուչներ:

Ներկայացնելով անասնաբուծության ոլորտում 2014 թվականին Արագածոտնի մարզում գրանցված արդյունքները՝ Գրիշա Բաղիյանը նշել է, որ վերջին չորս տարիներին այս բնագավառում նկատվում են դրական միտումներ, որոնք նախատեսվում է պահպանել նաև ընթացիկ տարում:

Վերլուծելով մարզում անասնաբուժության ընդհանուր իրավիճակը և մատնանշելով ոլորտի թերություններն ու բացթողումները՝ փոխնախարարը կարևորել է անասնաբույժների պարտականությունների պատշաճ կատարումը: Նա հավելել է, որ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում, Արագածոտնի մարզին 2015 թվականին հատկացվել է շուրջ 60 մլն դրամի ախտորոշիչ, կանխարգելիչ և բուժիչ միջոցներ՝ անասնաբուժական միջոցառումներ իրականացնելու համար:

Անդրադառնալով մարզում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, մասնավորապես՝ բրուցելյոզի կանխարգելմանը, նա ընդգծել է հիվանդության հայտնաբերման վաղ շրջանում հիվանդ կենդանիների մեկուսացման և սպանդի ենթարկման անհրաժեշտությունը:

Շեշտելով, որ կենդանիների հիվանդությունների կանխարգելմանը կարող է նպաստել նաև բակային մորթի աստիճանական սահմանափակումը՝ ժամանակակից սպանդանոցների կառուցման միջոցով, փոխնախարարը տեղեկացրել է, որ 2014 թվականի վերջին հանրապետությունում շահագործման են հանձնվել ժամանակակից սարքավորումներով հագեցած 5 սպանդանոց, որոնցից մեկը՝ Արագածոտնի մարզում: Նրա խոսքով՝ հետագայում նախատեսվում է նման սպանդանոցներ հիմնել բոլոր մարզերում:

Այնուհետև փոխնախարարը այցելել է անասնաբուժական մարզային լաբորատորիա և Արտաշավան համայնքի նորաբաց անասնաբուժական սպասարկման կենտրոն, որը հիմնվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ, «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի (2011-2016 թթ.) շրջանակում:

- -

ՀՀ ամողջ տարածքում, «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում իրականացվող հակահամաճարակաբանական միջոցառումների մեկնարկի հետ կապված, ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գրիշա Բաղիյանն այցելել է Կոտայքի մարզ:

Նախարարի առաջին տեղակալը հանդիպել է Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Միհր Եղիազարյանի, համայնքապետերի, ֆերմերների և ոլորտի այլ պատասխանատուների հետ: Քննարկվել են մարզում գյուղատնտեսական կենդանիների ձմեռացման ընթացքի հետ կապված հարցեր, ինչպես նաև՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում, մի շարք հիվանդությունների դեմ պետական պատվերի շրջանակներում իրականացվող հակահամաճարակային միջոցառումների ընթացքը:

Գրիշա Բաղիյանը հայտնել է, որ 2015 թվականին հանրապետության ամբողջ տարածքում անասնաբուժական միջոցառումները կիրականացվեն անվճար հիմունքներով: Երկրում կայուն անասնաճարակային իրավիճակ պահպանելու գործընթացն ապահովելու նպատակով, ՀՀ կառավարությունը պետական բյուջեի միջոցներից հատկացրել է 1 մլրդ 189 մլն դրամ, որից՝ 594 մլն դրամն ուղղվել է ախտորոշիչ, կանխարգելիչ և ախտահանիչ միջոցների, ինչպես նաև՝ անհրաժեշտ անասնաբուժական պարագաների ձեռքբերմանը: Այդ թվում, շուրջ 40 մլն դրամի ախտորոշիչ, կանխարգելիչ և բուժիչ միջոցներ տրամադրվել են Կոտայքի մարզին:

Հանդիպման ընթացքում նա անդրադարձել է «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրով իրականացվող անասնաբուժական միջոցառումների կազմակերպչական հարցերին, մարզպետարանի պատասխանատու անձանց հետ հստակեցվել է միջոցառումների իրականացման ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել են Գեղաշեն համայնքում բրուցելյոզ հիվանդության դեմ իրականացվող պայքարի աշխատանքները: Գրիշա Բաղիյանը միևնույն ժամանակ ցուցումներ է տվել «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավարներին, մարզային կառույցի ներկայացուցիչներին, ինչպես նաև մարզի համայնքային անասնաբույժներին՝ հակահամաճարակային միջոցառումները ժամանակին և արդյունավետ իրականացնելու վերաբերյալ:

Հանդիպումից հետո, նախարարի առաջին տեղակալն այցելել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից Արզնի և Մայակովսկի համայնքներում կառուցված սպանդանոցներ, ծանոթացել դրանց տեխնիկական կարողություններին, սպանդանոցների տնօրենների հետ ճշգրտել շահագործման ժամկետները:

Սպանդանոցների տնօրենների հավաստմամբ, սպանդանոցներն ամբողջությամբ պատրաստ են գործարկման, և առաջիկա օրերին արդեն իսկ կիրականացվեն խոշոր եղջերավոր կենդանիների, ինչպես նաև խոզերի և ոչխարների մորթ: Նշենք, որ մարզում տեղակայված երկու սպանդանոցները հնարավորություն ունեն ոչ միայն ամբողջությամբ իրականացնել Կոտայքի մարզի անասնագլխաքանակի, այլև՝ մասամբ ապահովել նաև հարևան մարզերի առանձին տարածաշրջանների գյուղատնտեսական կենդանիների մորթը:

Եվրասիական տնտեսական միությանը՝ Հայաստանի անդամակցության հետ կապված, տնտեսավարողների մոտ մաքսային սահմանում առաջացող հարցերի պարզաբանման համար ՀՀ ֆինանսների նախարարությունում գործում է թեժ գիծ՝ 060544444 հեռախոսահամարով:

ՄԹԵՐՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը օրերս այցելել է Արարատի մարզ՝ ընթացիկ տարվա մթերումների գործընթացի կազմակերպման հետ կապված հարցերը տեղի վերամշակող ընկերությունների ղեկավարության հետ քննարկելու նպատակով:

Փոխնախարարն այցելել է մարզում տեղակայված պտուղբանջարեղեն և խաղող վերամշակող՝ «Շահումյան վին» ՍՊԸ, «Արարատի գինու գործարան», «Բորոդինո» հայկական պահածոների գործարան», «Արտաշատի պահածոների գործարան» և «Այգեզարդի գինու գործարան»:

Ռոբերտ Մակարյանը կարևորել է գյուղատնտեսական հումքի մթերման գործընթացների կազմակերպման ուղղությամբ միջոցառումների պատշաճ իրականացումը՝ որով կապահովվի գյուղացիական տնտեսություններին տրվող վճարումների ժամանակին կատարումը:

Հանդիպումների ընթացքում ընկերությունների ղեկավար կազմի հետ մանրամասն քննարկվել են ընթացիկ տարվա գործունեության և մթերումների կազմակերպման նախնական ծրագրերը, անդրադարձ է կատարվել վերջիններիս բնականոն գործունեությունը խոչընդոտող առկա և լուծում պահանջող խնդիրներին, նախանշվել դրանց լուծման ուղիները:

ԱՐՄԱՎԻՐ

ՎԵՐԱԴԱՐՁ՝ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻՆ

Անցած գյուղատնտեսական տարում Արմավիրի մարզում մշակվող հողատարածքները, 2013թ-ի համեմատությամբ, ավելացել են 2595,5 հա-ով: Մարզում հաջողությամբ են ընթացել նաև նոր այգիների հիմնման աշխատանքները: Ավելի քան 430 հա-ի վրա հիմնվել են տնկարկներ, որից՝ 230,9 հա-ը պտղատու և 198,29 հա-ը՝ խաղողի այգիներ:

«Արդեն հինգերորդ տարին է, ինչ մարզում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները չեն գերազանցում 8000 հա: Դա վկայում է այն մասին, որ գյուղատնտեսական արտադրության մեջ վերականգնվում է տնտեսությունների մասնագիտացումն առավել եկամտաբեր ճյուղերի՝ խաղողի, պտղի և բանջարեղենի տարբեր տեսակների արտադրության ուղղությամբ»,-ասում է մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը: Ասել է թե՝ գյուղացին վերադառնում է նախկին ավանդույթներին:

Ընդհանուր առմամբ, Արմավիրի մարզի 124211 հա վարչական տարածքում գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են 97025,8 հա, որից՝ 2014թ. գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործվել է 45898,5 հա: Գյուղատնտեսական նշանակության հողատարածքներից 30366,3 հա-ը վարելահողեր են, 718,6 հա՝ խաղողի և 8413,6 հա՝ պտղատու այգիներ:

Անցած գյուղատնտեսական տարում բոլոր մշակաբույսերի արտադրության ծավալները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը, բացառությամբ՝ պտղի, որը ցրտահարության հետևանք էր: «Ցրտահարության հասցրած վնասները հնարավորինս մեղմելու, հողօգտագործողներին համակողմանի աջակցելու նպատակով, ՀՀ կառավարության և մարզպետարանի կողմից իրականացվել են լայնածավալ աշխատանքներ, ինչի արդյունքը՝ առկա ցուցանիշներն են»,- նշում է վարչության պետը: Վնասված այգետարածքների արագ վերականգնմանը նպաստել են նաև մասնագետների խորհուրդները, որոնց հետևող գյուղացիական տնտեսությունների նյութական կորուստներն անհամեմատ փոքր են եղել:

ԱՐԱԳԱԾՈՏՆ

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Բույսերի վնասատուների զանգվածային բազմացումն ու տարածումը ժամանակին կանխատեսելու, ախտորոշելու և կանխարգելելու նպատակով, ՀՀ Արագածոտնի մարզում 2014թ. իրականացված լայնածավալ աշխատանքները տվել են ցանկալի արդյունք: Այդ ուղղությամբ մտահոգության տեղիք տվող իրավիճակներ չեն առաջացել:

Մկնանման կրծողների դեմ պայքար է իրականացվել 5953 հա-ի վրա: Հիվանդություններից և վնասատուներից պաշտպանված են եղել նաև խաղողի այգետարածքները. 3800 հա-ի վրա պայքարի աշխատանքներ են տարվել միլդիուի, 5100 հա-ի վրա՝ օիդիումի, 3500 հա-ի վրա՝ ողկուզակերի դեմ: Խնձորի արտադրության գծով հանրապետությունում առաջատար տեղ գրաված մարզում 9850 հա-ի վրա պայքարի միջոցառումներ են կատարվել պտղակերի, 12600 հա-ի վրա՝ ալրացողի և քոսի, 6100 հա-ի վրա՝ ծակոտկեն բծավորության դեմ: Ավելի քան 1500 հա-ի վրա պայքարի աշխատանքներ են տարվել բոստանային մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, 4200 հա-ի վրա՝ կարտոֆիլի կոլորադյան բզեզի, 4500 հա-ի վրա առվույտի ֆիտոնոմուսի և 775 հա՝ օկնոգենա վնասատուի դեմ:

«Պետության կողմից պատվիրված լիազորությունների շրջանակներում, մարզպետարանի մասնագետներն աջակցել են համայնքների ղեկավարներին՝ գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքների լավագույնս կազմակերպման, ինչպես նաև ագրարային կանոնների պահպանումն իրականացնելու գործում»,- նշում է գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յուրա Ազատյանը: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում՝ մարզում արտադրվել է որակյալ, ամենախստապահանջ սպառողի պահանջարկը բավարարող միրգ և բանջարեղեն, որն այս օրերին հիմնականում իրացվում է Երևանի շուկաներում, մասամբ էլ՝ արտահանվում է: 2014թ. մարզում արտադրվել է 71600 տ պտուղ և հատապտուղ, 15500 տ խաղող: Ի դեպ, 2013թ.-ի համեմատությամբ, արտադրության ծավալները զգալիորեն ավելացել են:

ՄՅՈՒՆԻՔ

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ ԵՆ ԲԱՐՁՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

«2014թ. ընթացքում Սյունիքի մարզում գյուղատնտեսությամբ զբաղվել են 18390 գյուղացիական և ֆերմերային տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ և արտադրությամբ՝ 60 գյուղատնտեսական կազմակերպություններ: Ոլորտում 2014թ., 2013թ. համեմատությամբ, արձանագրվել են բարձր ցուցանիշներ»,-ասում է մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը:

Արտադրված գյուղմթերքներով բավարարվել է ոչ միայն մարզի բնակչության պահանջարկը, այլև արտահանվել է 4429 տ կարտոֆիլ, 1549 տ կաղամբ, 1429 տ աշնանացան ցորենի սերմացու, 420 տ ձավարեղեն: Սամվել Թանգյանի կարծիքով՝ բերքատվության բարձր ցուցանիշներին նպաստել են նաև պետական աջակցության ծրագրերը. 2014թ. ֆերմերային տնտեսություններին և համայնքներին շուկայականից էժան գներով հատկացվել է 1197529 լ դիզվառելիք, որը բաշխվել է 2732 շահառուների, 2200 տ ազոտական պարարտանյութ (շահառուների թիվը՝ 3004): Ընդհանուր առմամբ, մարզում կատարվել է 23925,6 հա հացահատիկային, 385,6 հա հատիկաընդեղենային, 999,2 հա բանջարային, 6328 հա կերային և 7 հա տեխնիկական մշակաբույսերի և 1728,3 հա կարտոֆիլի ցանք: Պտղի և հատապտղի այգետարածքները կազմել են 2591,3 հա, իսկ խաղողինը՝ 185,1 հա: Հացահատիկի միջին բերքատվությունը հեկտարից կազմել է 30,4 ց՝ նախորդ տարվա 29,8 ց-ի փոխարեն: 2014թ.-ին աշնանացան է կատարվել 16869 հա-ի վրա, որը նախորդից ավելի է 614 հա-ով:

Անցած տարի, մկնանման կրծողների դեմ պայքարի կազմակերպման նպատակով, ֆերմերային տնտեսություններին և համայնքներին, պայքարի կազմակերպման նպատակով, հատկացվել է 1351,08 կգ թունանյութ (ցինկի ֆոսֆիդ), պայքար է կազմակերպվել 46 համայնքների ցանքատարածություններում: «Մարզում կարևորվում են նաև հացահատիկի սերմարտադրության, սերմաթարմացման և սորտափորձարկմանն ուղղված միջոցառումները, որոնց ուղղությամբ տարվել են համապատասխան աշխատանքներ: Կազմակերպվել և իրականացվել են սերմերի արտադրությունն ու վաճառքը, ապահովվել՝ որակյալ և կոնդիցիոն սերմերի պահանջարկը»,- հավելում է Սամվել Թանգյանը:

ՎԱՅՈՑ ՁՈՐ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՃ

Վայոց ձորի մարզում դեռևս 2014թ. վաղ գարնանային գյուղատնտեսական աշխատանքները սկսվեցին բնակլիմայական անբարենպաստ պայմաններում: Ցրտահարության և կարկտահարության հետևանքով վնասվեցին պտղատու և խաղողի այգիները, իսկ մի շարք համայքներում՝ նաև գյուղատնտեսական մշակաբույսերը:

Անցած գյուղատնտեսական տարում, պետական աջակցության ծրագրերով, մարզի հողօգտագործողներին, շուկայականից ցածր գներով, հատկացվել 470 տ ազոտական պարարտանյութ, 136736 լ դիզելային վառելանյութ, 28500 կգ գարնանացան գարու, 66000 կգ աշնանացան ցորենի և 468 կգ առվույտի սերմացու: «Ցրտահարության և կարկտահարության պատճառած վնասները մեղմելու նպատակով, մարզի առավել տուժած համայնքներին, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից, գարնանը անհատույց տրամադրվել է լոլիկի, վարունգի, սեխի և ձմերուկի սերմացու, ստացվել է բարձր բերք: Աշնանը, մասնավորապես՝ սահմանային և բարձր լեռնային համայնքների շահառուներին, անհատույց հատկացվել է 37000 կգ գարնանացան գարու, 630 կգ առվույտի և 30 կգ եգիպտացորենի սերմացու՝ գարնանը ցանք կատարելու նպատակով»,- նշում է մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մարատ Ներսիսյանը: ՀՀ կառավարության մեկ այլ որոշմամբ, ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով, 50%-ով զիջվել է ոռոգման ջրի վարձավճարը: Հակառակ ստեղծված բնակլիմայական անբարենպաստ պայմաններին, պետական աջակցությունների և մարզի հողօգտագործողների լարված ու տքնաջան աշխատանքի արդյունքում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները, բացառությամբ՝ խաղողի և պտղի (հայտնի պատճառներով), բոլոր բնագավառներում գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները: 2014թ. մարզի ընդհանուր ցանքատարածությունը կազմել է 4691 հա, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 186 հա-ով:

Մարզային նյութերը՝ Նելլի Սահակյանի

Ագրոլրատու
Փետրվար 5 - 17, 2015 թ.
թիվ 2 (2056)

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԷՏԸ

Էտի նպատակը՝ պտղատու ծառերի աճեցողության և պտղաբերության նպատակադիր կարգավորումն է և պատկանում է պտղատու ծառերի վրա ուժեղ ներգործություն ունեցող ագրոմիջոցառումների թվին:

Էտի միջոցով ձևավորում և ստեղծում են ամուր կմախքով, համահավաք սաղարթով ծառեր, բարելավում օդափոխության և լուսավորության պայմանները, դյուրացնում ծառերի խնամքի և մշակության աշխատանքները: Երիտասարդ ծառերի չափավոր և ճիշտ էտի միջոցով կարելի է արագացնել պտղաբերության անցնելու ժամկետը: Էտն իրականացվում է երկու եղանակով՝ կարճացումով և նոսրացումով, որոնք սովորաբար կատարվում են միասին, ինչպես նաև՝ առանձին-առանձին: Կարճացնելիս հեռացվում է ճյուղի և շվի երկարության որոշ մասը. այն լինում է թույլ, միջին և ուժեղ: Նոսրացնելիս հեռացնում են ճյուղը կամ շիվը, չորացած, թույլ, հիվանդ, սաղարթը խտացնող, մեկը-մյուսին խանգարող, կախ ընկած աճերը: Նոսրացումը կատարվում է թույլ, չափավոր և ուժեղ:

Էտի ժամկետը

Հանգստի շրջանում սննդանյութերի մեծ մասը կուտակվում է բույսի արմատներում, բնի և հիմնական ճյուղերի հիմքի մասերում, հետևաբար, որպեսզի սննդանյուերի կորուստ չլինի, ծառերը էտվում են, երբ բույսերը դեռևս խորը հանգստի շրջանում են:

Սովորաբար, էտը կատարվում է վաղ գարնանը, մինչև բողբոջների ուռչելը: Միայն Նոյեմբերյանի, Տավուշի և Մեղրիի ենթաշրջաններում է էտ կատարվում ծառերի տերևաթափից 15-20 օր անց, մինչև վաղ գարուն: Առաջին հերթին պետք է էտել ցրտադիմացկուն տեսակները՝ աստիճանաբար անցնելով համեմատաբար թույլ դիմացկունություն ունեցողներին: Դրանք են՝ խնձորենին, սալորենին, տանձենին, բալենին, ծիրանենին, կեռասենին, սերկևիլենին և դեղձենին:

Կիրառվում է ամառային կամ կանաչ էտ, երբ շվերի աճը կազմում է 25-30 սմ: Կանաչ էտի նպատակն է՝ կարգավորել ծառերի աճը, նպաստել մեծ թվով աճակալող և պտղաբերող ճյուղերի առաջացմանը: Կանաչ էտի ժամանակ հիմքից պետք է հեռացնել կենտրոնական և կմախքային ճյուղերի ողկույզների մրցակից աճերը, դեպի սաղարթի ներսը գնացող, ինչպես նաև կմախքային ճյուղերի վրա ուղղահայաց աճող ուժեղ շվերը, բնի հիմքից առաջացած մացառներն ու բնի վրայի ճյուղերը:

Երիտասարդ ծառերի էտը:

Երիտասարդ հասակում էտի հիմնական խնդիրը՝ ծառերի ձևավորումն է: Ծառերի կյանքի սկզբնական շրջանում ուժեղ էտը, առանձնապես շվերի խորը կարճացումը, նպաստում է աճի ուժեղացմանը, հետաձգում պտղաբերող ճյուղերի առաջացումն ու պտղաբերության շրջանի թևակոխումը: Այդ նպատակով երիտասարդ ծառերի էտը, հնարավորության սահմաններում, պետք է կատարել չափավոր: Ճյուղերի կարճացման հետ կատարել նաև նոսրացում՝ հեռացնելով սաղարթը խտացնող, մեկը-մյուսի աճին խանգարող, սուր անկյան տակ աճող ճյուղերը: Ձևավորման տարիներին հիմնականում կատարել ծերատում և նոսրացում, երբ շվերի աճը հասնում է 40-50 սմ-ի, իսկ մինչև 35-40 սմ աճեր ունեցողները՝ չծերատել: Հայտնի է, որ կորիզավոր պտղատեսակներն առավելապես պտղաբերում են միամյա աճերի վրա, որոնց ուժեղ կարճացումը բացասաբար է անդրադառնում բերքատվության վրա: Այդ նկատառումով էլ հիմնականում պետք է կիրառել նոսրացնող էտ, իսկ 40-45 սմ-ից բարձր աճերը կարճացնել 1/4-1/3-ի չափով:



Կմախքային և դրանց վրա ստեղծված մյուս կարգի ճյուղերի էտը կատարել այն հաշվով, որպեսզի պահպանվի կենտրոնական ուղեկցողի իշխող դիրքը, ապահովվի մյուս կարգի ճյուղերի ենթարկվածությունը մեկը մյուսին:

Պտղաբերող ծառերի էտը:

Բերքատվության սկզբնական շրջանում, երբ դեռևս ծառերի աճը ուժեղ է, հիմնականում կիրառվում է 40-45 սմ բարձր աճ ունեցող շվերի կարճացում՝ 1/4-1/3-ի չափով, ինչպես նաև՝ նոսրացում: Երբ աճն աստիճանաբար սկսում է թուլանալ՝ հասնելով 30-35 սմ, անհրաժեշտ է շվերի կարճացումը դադարեցնել և կիրառել միայն նոսրացում: Իսկ երբ աճը սկսում է թուլանալ և 15-20 սմ-ից չանցնել, նորից կատարել շվերի և ճյուղերի կարճացում, նպաստելով աճի ուժեղացմանն ու նոր պտղաճյուղերի առաջացմանը:

Ինչպես հայտնի է, էտի եղանակը և կիրառման աստիճանը, մեծ չափով կախված են տեսակի և սորտի կենսաբանական առանձնահատկություններից: Այսպես՝ հանրապետությունում լայն տարածում ունեն դեղձենին և ծիրանենին, որոնք աչքի են ընկնում ճյուղառաջացման մեծ ունակությամբ

↳6

ԿՐԹԱԿԱՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒՍԱՆԵԼԻ Է

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնը հիմնվել է դեռևս 2010 թվականին: Երիտասարդ մասնագետների խումբը տնօրենի՝ տնտեսագիտության թեկնածու Վաչագան Մելքոնյանի ղեկավարությամբ, աշխուժորեն գործի անցավ: Առաջին հերթին հիմնվեցին ժամանակակից պահանջներին համապատասխան համակարգչային լսարաններ՝ հեռավար ուսուցման հնարավորություններով:

Հանգամանք, որը շատ կարևոր է Վանաձորում, Սիսիանում, Արցախում մասնաճյուղեր ունեցող բուհի համար: Ստեղծվեց նաև համալսարանի ամբողջովին նոր պաշտոնական կայքէջը, որը՝ և՛ բովանդակային, և՛ տեխնիկական առումով, հագեցած է ու ամբողջական: Կատարվեցին նաև մի շարք այլ աշխատանքներ, որոնցից կարևորնեը՝ վերջերս Տեմպուսի «GOVERN» ծրագրի շրջանակներում, SS և ԻԾ կենտրոնի տնօրեն Վաչագան Մելքոնյանը ներկայացրեց հայաստանյան մյուս բուհերի ներկայացուցիչներին:

Այսօր արդեն համալսարանում ներդրվել և ընթացիկ կատարելագործման փուլում են այն համակարգերը, որոնք անհրաժեշտ են ժամանակակից ուսումնական գործընթացն արդյունավետ կառավարելու համար: Առաջին ծրագիրը՝ գրադարանային գործի թվայնացման «KOHA» համակարգն է, որը բուհում գործում է 2013 թ.-ից: Մեկ տարի պահանջվեց, որպեսզի «KOHA» ծրագրով ստեղծվի ՀԱԱՀ գրադարանի հարուստ շտեմարանը: Այս գործընթացն արդեն ավարտված է, և ահռելի գրաֆոնդի գրացուցակի էլեկտրոնային տարբերակը ևս հասանելի է ընթերցողին: Ստեղծվել է նաև կարիերայի կենտրոնի տվյալների էլեկտրոնային բազան: Բուհն այսօր առցանց կապ ունի շրջանավարտների հետ, տեղյակ է նրանց աշխատանքային գործունեության ու առաջընթացի մասին: Աշխատանք որոնողներին իրազեկում ու մատնացույց է անում ագրարային ոլորտի ձեռնարկություններում առկա թափուր աշխատատեղերը և հնարավորություն ստեղծում գործատուներին անձամբ գտնել աշխատողների՝ մեծաքանակ տվյալների էլեկտրոնային բազայից:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնը ձեռնամուխ է եղել ևս երկու՝ էլեկտրոնային դասացուցակ և էլեկտրոնային դեկանատ խոշոր նախագծերի իրականացմանը: Հիմնարար տվյալներն արդեն մուտքագրված են, և հեռու չէ այն օրը, երբ ուսումնական գործի կազմակերպման այդ բարդ ու աշխատատար ոլորտներում մարդու գործը կթեթևացնեն համակարգիչները: Ծրագրավորողները խոստանում են, որ դասացուցակները նվազագույնի կհասցնեն դասահամընկնումները, ուսանողների հոծ խմբերի անհարկի տեղաշարժերը՝ մասնաշենքերում, իսկ դեկանատների աշխատանքը կդառնա ավելի թափանցիկ, վերահսկելի, փաստաթղթաշրջանառությունը՝ օպերատիվ:

ՀԱԱՀ SS և ԻԾ աշխատակիցների գաղափարները բարձր գնահատականի արժանացան միջոցառմանը մասնակցող հայաստանյան մյուս բուհերի ներկայացուցիչների կողմից, նաև համագործակցության ծրագրեր ուրվագծվեցին: Ծավալվեց մտքերի շահագրգիռ փոխանակություն: Մասնավորապես, ՀԱԱՀ-ի մասնագետները կաջակցեն բոլոր հետաքրքրվող բուհերին՝ գործընթացը ընդհանուր դարձնելու և փորձով կիսվելու հարցում: Առաջին քայլն արդեն արված է. ՀԱԱՀ-ի մասնագետները մասնակցում են Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի գրադարանի թվայնացման աշխատանքներին և օգնում են ներդնել «KOHA» ծրագիրը: Մասնակիցները համոզված էին, որ այս շիտակ ճանապարհը միջբուհական կապերի լուրջ հարթակի կարող է վերածվել:

www.anau.am

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԷՏԸ

5 ☞

և ուժեղ աճեցողությամբ: Այս պտղատեսակներից՝ հատկապես դեղձենին, լուսասեր և ջերմասեր է, հետևաբար դրա էտը պետք է նպատակամղված լինի լուսային և ջերմային պայմանների կարգավորմանը: Այդ նպատակով կիրառվում է համեմատաբար ուժեղ նոսրացում, իսկ կարճացումը կատարվում է չափավոր կամ թույլ՝ ելնելով ծառերի առողջական վիճակից:

Հնդավորներն, ըստ ճյուղավորման բնույթի, աճի և պտղաբերման հատկությունների, բաժանվում են մի քանի խմբի: Առաջին խումբն աչքի է ընկնում ճյուղառաջացման մեծ ունակությամբ և ուժեղ աճով: Այդ սորտերը գլխավորապես պետք է նոսրացնել, ձևավորման շրջանում նաև կարճացնել: Սաղարթը ձևավորելուց հետո հիմնականում նոսրացնել, իսկ երբ ծառերի աճն սկսում է թուլանալ՝ ուժեղացնել շվերի և ճյուղերի կարճացումը:

Երկրորդ խումբն օժտված է ճյուղառաջացման միջին ունակությամբ և աճով: Նման սորտերը պետք է չափավոր կարճացնել և նոսրացնել, լրիվ պտղաբերման շրջանում ուժեղացնել կարճացումը՝ աճը վերականգնելու և նոր պտղաճյուղեր առաջացնելու նպատակով:

Երրորդ խումբն ունի ճյուղառաջացման միջին ունակություն, համեմատաբար թույլ աճեցողություն: Նման սորտերը պահանջում են միջին նոսրացում և ուժեղ կարճացում:

Պտղաբերման պարբերականությունը, որն ուժեղ արտահայտվում է հնդավորների, մասնավորապես՝ խնձորենու մոտ, թուլացնելու համար պետք է ուժեղ բերքի տարում թույլ էտել, իսկ թույլ բերքի տարում՝ ուժեղ, վեգետատիվ աճը խթանելու նպատակով:

Մեծահասակ ծառերի էտը

Կապված հասակի հետ՝ ծառերի սաղարթը ձգվում է վեր, մերկանում են կմախքային ճյուղերը, կրճատվում ասիմիլացիոն և պտղաբերող մակերեսները, պտղաբերությունը հիմնականում կենտրոնանում է սաղարթի ծայրամասերում, չորանում են ճյուղերը, թուլանում են ծառի աճն ու բերքատվությունը: Այս դեպքում պահանջվում է երիտասարդացնող էտ, որը լինում է թույլ, չափավոր և ուժեղ:

Թույլ էտի ժամանակ կմախքային և կիսակմախքային ճյուղերը պետք է կարճացնել 2-3 տարեկան բնափայտի վրա, նոսրացնել չորացած, հիվանդ և թույլ ճյուղերը, իսկ վնասվածները հեռացնել հիմքից կամ՝ մինչև առողջ մասը:

Չափավոր երիտասարդացնող էտի ժամանակ ճյուղերը կարճացվում են 4-6 տարեկան բնափայտի մոտից: Հատկապես լավ արդյունք է ստացվում, երբ ճյուղերը կարճացվում են վերջին բնականոն աճի /35-40 սմ/ մոտից: Նոսրացումը կատարել այնպես, ինչպես թույլ երիտասարդացնող էտի ժամանակ:

Ներկայումս ուժեղ երիտասարդացնող էտ խորհուրդ չի տրվում կատարել, նպատակահարմար է ծերացած ծառերը քանդել՝ տեղում հիմնելով նորերը:

Ծառերի երիտասարդացնող էտի ժամանակ պետք է ուժեղացնել այգու հողի մշակության, ոռոգման և պարարտացման աշխատանքները, հակառակ պարագայում, այն կբերի բացասական հետևանքների:

Գ.Սանթրոսյան
ՀԱԱՀ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

ԷԿՈՏՈՒՐԶՄ

ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակում կողմերը համագործակցելու են բնության պահպանության և էկոտուրիզմի զարգացման ոլորտներում:

Համաձայն հուշագրի՝ IDeA հիմնադրամը և WWF-Հայաստանը համատեղ աշխատանքներ կիրականացնեն «Սատանի կամուրջ» բնության հուշարձանի կառավարման բարելավման ուղղությամբ, ինչպես նաև հանրապետության հարավում կնախաձեռնեն նոր բնության հատուկ պահպանվող տարածքի՝ «Տաթև» ազգային պարկի ստեղծումը: Վերոնշյալ նախաձեռնությունների նպատակը՝ տարածքի յուրահատուկ էկոհամակարգի և կենսաբազմազանության պահպանումն է, աջակցությունը՝ էկոտուրիզմի զարգացմանը:

Հուշագիրը ստորագրեցին IDeA հիմնադրամի գլխավոր տնօրեն Արմեն Գևորգյանը և WWF-Հայաստանի տնօրեն Կարեն Մանվելյանը: «Մեր համագործակցությունն ուղղված է Տաթևի տարածաշրջանում բնության պահպանությանն ու զբոսաշրջության զարգացմանը: IDeA հիմնադրամի կողմից իրականացվող «Տաթևի վերածնունդ» ծրագրի հիմնական նպատակներից մեկը՝ տարածաշրջանը զբոսաշրջության տեսանկյունից գրավիչ դարձնելն է, ինչը կնպաստի նաև հարակից համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը: Դրա համար բոլոր նախադրյալներն առկա են՝ միջնադարյան վանական համալիրը, ճոպանուղին, հարուստ բնությունն ու յուրահատուկ էկոհամակարգը, որի պահպանումը կարևոր է նաև էկոտուրիզմի զարգացման առումով: Համոզված եմ, որ համատեղ ջանքերով մեզ կհաջողվի կյանքի կոչել տարածաշրջանի զարգացմանն ուղղված բոլոր ծրագրերը»,- նշել է IDeA հիմնադրամի գլխավոր տնօրեն Արմեն Գևորգյանը:

«Շատ կարևոր է մեր համագործակցությունը IDeA հիմնադրամի հետ, որի արդյունքում կպահպանվեն Տաթևի տարածքի յուրահատուկ էկոհամակարգը և կենսաբազմազանությունը, ինչպես նաև տարածքում գտնվող համայնքների համար կստեղծվեն լայն հնարավորություններ՝ բարելավելու իրենց ապրելակերպը»,-ողջույնի իր խոսքում նշել է WWF-Հայաստանի տնօրեն Կարեն Մանվելյանը:

ԿՐԹԱԿԱՆ

ՎԵՐՆ ՀԱՈՒԶ. ԱՀՍԿՆ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ Է, ՔԱՆ՝ ԵՐԲԵՎԷ

Վերն Հաուզը ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում դասավանդել է «Գյուղատնտեսական կոոպերատիվներ» առարկան՝ 2002-2006 թթ.: Դոկտ. Հաուզը, ով այսօր իր վաստակած հանգիստն է վայելում Մոնտանայի իր տանը, որպես ԱՈՒԿ-ի (Ագրոբիզնեսի ուսումնական կենտրոն) դասախոս, հետաքրքիր հետք է թողել հայ և վրացի ուսանողների սրտերում: Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնում (Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն) մեծ հարգանքով ու գնահատանքով են հիշում նրան և իր հրաշալի տիկնոջը՝ Նենսիին և առ այսօր երախտապարտ են շարունակվող բարեկամության ու աջակցության համար: Կուզենայինք հաղորդակից դարձնել դոկտ. Հաուզի՝ ԱՀԿՄԿ հիմնադրամին և ԱՈՒԿ-ի կոլեկտիվին ուղղված նամակին՝ հատվածաբար:

Սիրելի գործընկերներ,

Այն հանգամանքը, որ ԱՀԿՄԿ հիմնադրամի գործունեության ղեկը հենց ձեր ձեռքերում է՝ գոհացնում է ինձ: ԱՀԿՄԿ-ն իրագործում է աշխատանքներ, որոնք

ինձ համար նախկինում երևակայությունից դուրս էին: Թե ընթացիկ գործառույթների բարելավումը, և թե նոր ծրագրերն ու գործառույթները (օրինակ, գինու ակադեմիան՝ երբեք չէի պատկերացնի) խոստումնալից են՝ ԱՀԿՄԿ-ի բարի համբավի տարածման առումով:

Ճիշտ է, հաճելի է լսել, որ ինձ կարոտում եք, սակայն հավատացած եմ, որ երիտասարդ դասախոսների համալրմամբ, տարեցտարի ԱՈՒԿ-ում էլ ավելի է բարելավվում դասավանդման որակը, դասախոսներ, ովքեր մատուցում են ամենաարդիական գիտելիքը՝ դասավանդման ամենաարդիական եղանակներով: Դասավանդման հարցում ԱՈՒԿ-ը Հայաստանի բարձրագույն կրթության բնագավառում առաջատար հաստատություն է, և ուրախալի է, որ առաջատար հաստատությունն առաջիկայում ընդլայնելու է իր ընդգրկումը՝ ներառելով երկրորդ՝ զուտ գյուղատնտեսական մասնագիտացումը: Համոզված եմ, որ այս առումով, և առհասարակ, այն գյուղատնտեսական կրթության և վերապատրաստման գործում օգտակար հեռանկարներ կբացի ՀԱԱՀ-ի, Վիրջինիա Թեք համալսարանի և ԱՀԿՄԿ-ի միջև մեկնարկած գործակցության առջև: Գոհունակությամբ հայտարարում եմ՝ այսօր ԱՀԿՄԿ-ն ավելի ուժեղ է, քան՝ երբևէ:

Ուրախությամբ հայտնում եմ, որ այստեղ՝ ԱՄՆ-ում ԱՈՒԿ-ի իմ նախկին ուսանողներից ևս մեկը ստացավ գիտությունների թեկնածուի (P_D) աստիճան:

Փաստորեն, ԱՈՒԿ-ի շուրջ 150 հայ և վրացի ուսանողներից, որոնց ես դասավանդել եմ մեկ տասնամյակ առաջ, 10-ը ստացել են P_D, իսկ 8-ը՝ մագիստրոսի աստիճան՝ ԱՄՆ առաջատար համալսարաններից, չհաշված ԵՄ երկրներում և հայրենի երկրներում ստացած գիտական աստիճանները, որոնց թիվը շատ ավելին է: Հաճելի է լսել, որ մեր շրջանավարտներն առաջատարն են աշխատաշուկայում: Պատվախնդիր ուսանողներին դասավանդելը ինձ համար նման է երկրային դրախտի:

Շնորհակալություն Վարդան Ուռուտյանին և ԱՀԿՄԿ-ի կոլեկտիվին, ԱՈՒԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմին, հետազոտող գիտնականներին՝ կրթական հնարավորությունները սոցիալական նպատակներով օգտագործելու կարողության համար, ԱՀԿՄԿ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին՝ այս կարևոր երիտասարդ հաստատության զարգացումն ապահովելու համար: Դուք բոլորդ ինձ ամենամեծ շնորհն եք արել, որ երբևէ դասախոսը կարող է ստանալ ԱՈՒԿ-ում դասավանդելու հնարավորությունը, իսկ այսօր՝ արդեն հիշողությունը: Մեր կրթօջախի այսպիսի զարգացումը ես դեռ այն ժամանակ էի կանխատեսում:

Նորանոր հաջողությունների ակնկալիքով, հարգանքով և գնահատանքով:

Վերն Հաուզ
ԱՈՒԿ/ԱՀԿՄԿ-ի ընտանիքի պատվակից անդամ

Ագրոլրատու
Փետրվար 5 - 17, 2015 թ.
թիվ 2 (2056)

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

ԳՈՐԾՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Բնությունը մշտապես առատաձեռն է գտնվել մեր հանրապետության տարածքում ունենալ քաղցրահամ խմելու, արտիզյան, բուժիչ հանքային և ոռոգման ջրեր: Այսօր ջրամատակարարման գործընթացը կարգավորող բազմաթիվ ձեռնարկություններից մեկն է «Նոր Ակունք» ՓԲ ընկերությունը, որը Արմավիրի մարզում ջրամատակարարման աշխատանքներ է իրականացնում 2002թ.-ից: Ներկա պահին այդ գործունեությունը ղեկավարում է ընկերության տնօրենի տեղակալ Արտավազդ Թորոսյանը: Կատարված և առաջիկայում իրականացվող աշխատանքների մասին տեղեկացրեց ընկերության տնօրենը:

- Պարոն Թորոսյան, ի՞նչ առաքելություն է իրականացնում ընկերությունը Արմավիրի մարզում:

- Ընկերության առաքելությունն է՝ սպասարկման տարածքի բոլոր բաժանորդներին անհրաժեշտ քանակության, սանիտարահիգիենիկ, գործող նորմերին համապատասխան որակի խմելու ջրի մատակարարումը և կոյուղաջրերի անվտանգ հեռացումը: Անշուշտ, վերջնական նպատակներից է նաև բաժանորդներին շուրջօրյա անխափան ջրամատակարարման ապահովումը:

Ջրամատակարարման իրականացումը սկսվել է Արմավիր քաղաքի արևմտյան թաղամասերում (Արմավիրի 30%-ը) և Նորավան գյուղում: Ներկայումս փաստացի սպասարկվում է 13 համայնք՝ Արմավիր, Մեծամոր քաղաքները և 11 գյուղական համայնքներ: 1999թ. ՀՀ կառավարության 25.11.1999թ. «Նոր Ակունք» ՓԲԸ ստեղծմանը պետության մասնակցության մասին թիվ 712 որոշման հիման վրա, պետության (34 % բաժնեմաս) և Արմավիրի մարզի 11 համայնքների մասնակցությամբ ստեղծվեց «Նոր Ակունք» ՓԲԸ-ն: Ընկերությունն առաջինն էր ջրամատակարարման ոլորտում, որի ստեղծմանը, պետության հետ համատեղ, իրենց մասնակցությունն ունեցան նաև համայնքները: Արմավիրի տարածաշրջանում ջրամատակարարման համակարգն ի սկզբանե գործել է որպես կենտրոնացված (տարածաշրջանային) համակարգ, որը սնվել է Ակնալիճ-Տարոնիկ համակարգից: Տարածաշրջանի ամենացածրադիր վայրում տեղակայված 2 պոմպակայանները, ինչպես նաև Խանջյան գյուղում տեղակայված 2-րդ աստիճանի պոմպակայանը, ջուրը մղել են 200 և ավելի մետր բարձր տեղակայված համայնքներ: Նշված համակարգով սպասարկվել են Արմավիր և Մեծամոր քաղաքները, ջրատարին հարակից, ինչպես նաև արևմտյան հատվածի գյուղերը: Տարբեր տրամաչափի խողովակներից բաղկացած ջրատարի երկարությունը կազմել է ավելի քան 100 կմ, որում ջրակորուստների մակարդակը գերազանցել է 90 %-ը: Սակայն նշված համակարգը արդյունավետ չեր կարող աշխատել, ինչի արդյունքում՝ հատկապես վերջին տարիներին, ոչ միայն արևմտյան գյուղերը (Լեռնագոգ, Մյասնիկյան և Բաղրամյան), այլ նաև Արմավիր քաղաքը, գրեթե զրկված էին ջրամատակարարումից: Բացի այդ, նման համակարգով ջրամատակարարումը կապված էր մեծ ծախսերի (ինչպես՝ էլ. էներգիայի, այնպես էլ՝ շահագործման և պահպանման) հետ:

Համակարգի վերականգնման նպատակով 21.06.2000թ. և 12.09.2001թ., Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW), ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Նոր Ակունք» ՓԲԸ-ի միջև կնքված վարկի տրամադրման և ծրագրի ֆինանսավորման մասին պայմանագրերով, հատկացվեց 14,131.3 հազար եվրո, որից KfW բանկի վարկը կազմում էր 12,782.3 հազար եվրո (25,0 մլն. գերմանական մարկ), ՀՀ կառավարության համաֆինանսավորումը՝ 1,349.0 հազար եվրո:

- Ջուրը, մինչև սպառողին մատակարարելը, ի՞նչ միջոցներով եք վերահսկում:

- Ընկերության սպասարկման ամբողջ տարածքում ջրարտադրությունն իրականացվում է մեխանիկական եղանակով և խորքային հորերի միջոցով: Գլխամասերում ջուրը, գործող նորմերին համապատասխան, վարակազերծվում է, որից հետո միայն մատակարարվում է բաժանորդներին:

- Ջրի որակի ստուգման նպատակով կատարվում են արդյո՞ք քիմիական-մանրէաբանական հետազոտություններ:

- Իհարկե, ջրի որակի հսկողությունը պայմանագրային հիմունքներով, իրականացվում է ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային Արմավիրի մարզային փորձագիտական տեսչության կողմից:

- Խողովակների, ջրի մատակարարման հետ կապված ի՞նչ խնդիրներ կան, որոնք հրատապ լուծում են պահանջում:

- Վերը նշված վարկային ծրագրի շրջանակներում, 2002-2006 թթ.-երին վերականգնվեց/վերակառուցվեց ջրամատակարարման ցանցի մոտ 70 %-ը: Մնացած մասը, որը կառուցվել է դեռևս 30 և ավելի տարիներ առաջ գտնվում է խիստ վթարային վիճակում և ենթակա է վերականգնման: Բացի այդ, քանի որ ընկերությունում ջրարտադրությունն իրականացվում է խորքային հորերի միջոցով, խիստ կարևորվում է 10 և ավելի տարիներ շահագործվող խորքային հորերի փոխարինումը նոր, առավել էներգոարդյունավետ պոմպերով:

Նշենք, որ 2014թ. հունվարի 1-ից «Նոր Ակունք» ՓԲ կառավարումն իրականացվում է ֆրանսիական և գերմանական ֆիրմաների՝ SAUR, MVVdecon, MVV Energie,«ԷՅ-Ի-ՋԻ» սերվիս ՍՊԸ կոնսորցիումի կողմից:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՁԱՐԳԱՑԱԾ ԵՎ ՈՐԱԿՅԱԼ ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերջերս Արմավիրի ԳԱՄԿ-ում տեղի ունեցավ խմբային քննարկում, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) հետ համատեղ, «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվելու է հանրապետության երեք մարզերում, ծրագրի արժեքը կազմում է շուրջ 4,3 միլիոն դրամ:

Ֆոկուս խմբային քննարկման հիմնական նպատակը՝ Հայաստանում մրգերի տեսակների և ընկուզավորների մշակման, առևտրային ներուժի, խնդիրների, ռիսկերի վերաբերյալ գյուղացիական տնտեսությամբ զբաղվող թիրախային անձանց կարծիքների հավաքագրումն է:

«Այ ՓԻ ԵՄ ՐԻՍԵՐՉ» հասարակական կարծիքի ուսումնասիրության և մարքեթինգի կենտրոնի աշխատակից Վանինե Յերանոսյանը նշեց, որ նման քննարկումներ անցկացվում են հանրապետության 7 մարզերում և արդյունքում՝ ընտրվելու է 3 մարզ՝ ծրագիրն իրականացնելու նպատակով: Քննարկումը միտված է բացահայտել մարզում գյուղատնտեսությամբ զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների առկայությունը, առավել բերքատու և եկամտաբեր պտղատեսակներով զբաղվելու հեռանկարները, տարածաշրջանում պտղաբուծությամբ զբաղվելու առավելություններն ու թերությունները, ռիսկերն ու խնդիրները, իրացման շուկայի անհրաժեշտ նախադրյալները: Քննարկմանը մասնակցում էին մարզի 9 համայնքներից ընտրված ֆերմերներ, ովքեր ունեն պտղաբուծությամբ զբաղվելու 5 և ավելի տարվա փորձ, կես հա-ից մինչև 5 հա պտղատու այգիների տարածքներ, որոնք մշակում են սեփական ուժերով:

Շուրջ երկու ժամ տևած քննարկումների շրջանակներում, ֆերմերները ներկայացրեցին մարզում պտղաբուծությունը զարգացնելու իրենց առաջարկները՝ առաջնային համարելով նաև այն պայմանները, որոնք անհրաժեշտ են տարածքում այգեգործությունը զարգացնելու համար:



Նշելով ամենակարևոր խնդիրները՝ իրացման համար ազատ շուկայի անհրաժեշտությունը, սառնարանային տնտեսությունների և վերամշակման արտադրամասերի առկայությունը և այլ անհրաժեշտ նախապայմաններ, որոնց լուծման դեպքում միայն հնարավորություն կլինի ուենենալ զարգացած և որակյալ պտղաբուծություն:

Քննարկման ավարտին մասնակիցները հույս հայտնեցին, որ մարզը կընդգրկվի ծրագրի մեջ, քանի որ Արմավիրի մարզում կան բոլոր նախապայմանները՝ պտղաբուծությունն ու այգեգործությունը զարգացնելու, արտադրանքը միջազգային շուկա հանելու համար:

Սահականուշ Արոյան
Արմավիրի ԳԱՄԿ

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

«Պրոդէքսպո-2015»

Քսաներկու հայկական ընկերություններ մասնակցել են Մոսկվայում կայանալիք «Պրոդէքսպո-2015» միջազգային ամենամյա ցուցահանդեսին:

Հայկական ընկերությունների ներկայացուցիչները Մոսկվա են մեկնել Հայաստանի արդյունաբերական զարգացման հիմնադրամի աջակցությամբ: «Պրոդէքսպո 2015»-ը՝ սննդամթերքի, խմիչքի և հումքի միջազգային ցուցահանդես է, որն անցկացվել է փետրվարի 9-13-ը՝ Մոսկվայում: Ցուցահանդեսին մասնակցության հայտեր էին ներկայացրել ավելի քան 2000 մասնակից՝ 65 երկրից, գործել են շուրջ 31 ազգային տաղավարներ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԲՈՒՅՍԵՐ...

Կիտրոնաթուփ կամ կիտրոն չինական

Կիտրոնաթուփ կամ կիտրոն չինականը՝ Schizandra chinensis, պատկանում է մագնոլազգիների ընտանիքի կիտրոնաթփայինների ընտանիքին: Տերևաթափ, փայտացող բարակ ցողունով 1-2 սմ բնի հաստությամբ և 8-15 մ բարձրությամբ լիան է: Արմատը խորացող է, բնի կեղևի գույնը՝ դեղնավուն կամ մուգ շագանակագույն, թեփոտվող: Տերևները՝ հերթադիր, օվալ, սուր-ամբողջաեզր, բաց կանաչ, հյութալի: Տերևակոթունները կարմիր են, փերևի երկարությունը՝ 5-10 սմ է, լայնությունը՝ 3-5 սմ:

Ծաղիկները սպիտակ են, բուրավետ, ունեն բազմաթիվ վարսանդներ: Պտուղների հասունացման շրջանում ծաղկակալը երկարում է 20-30 անգամ՝ ձևավորվելով հատապտուղների ողկույզը: Հատապտուղները կարմրանարնջագույն են, գնդաձև, յուրաքանչյուրը պարունակում է 1-2 սերմ: Ծաղկում է գարնան վերջում, պտղաբերում է սեպտեմբեր-հոկտեմբերին: Բույսի հայրենիքը Հեռավոր Արևելքն է, աճում է խառը հաճարենու և լայնատերև անտառներում: Կիտրոնաթուփը մշակվում է ՌԴ-ի եվրոպական մասի մարզերում. նպատակը՝ բուժիչ հումք ստանալն է:

Բույսը լայն կիրառություն ունի Չինաստանում, Կորեայում և Ճապոնիայում: Բուժական նպատակներով օգտագործվում են սերմերն ու պտուղը: Հատապտուղներում կան մեծ քանակությամբ խնձորաթթու, կիտրոնաթթու, գինեթթու, շաքար, տանինիդներ, ներկանյութեր, եթերային յուղ, տոկոֆերոլներ, ասկորբինաթթու, նաև բույսի կենսաբանական հատկությունները բնորոշող միացություններ՝ սխիզանդրին և սխիզանդրոլ: Սերմերում հայտնաբերվել են լինոլի, լինոլենի, օլեինի, այլ ճարպային թթուների գլիցերիդներ, եթերային յուղ, խեժեր: Բույսը պարունակում է նաև՝ մանգան, երկաթ, կրեմնիում, ֆոսֆոր, կալցիում, պեկտին, ֆլավոններ, կատեխիններ: Կիտրոնաթփի բուժիչ հատկությունները հայտնաբերել և նկարագրել են չինացիները: Նրանք բույսն անվանում են. «Հինգ համ ունեցող պտուղ»:

Կիտրոն չինականի պտղի կեղևը քաղցր է, պտղամիսը՝ թթվահամ, սերմերը՝ դառը և տտիպ: Պատրաստուկները պահպանման ընթացքում ստանում են աղի համ: Պտուղներից ստանում են կիսել, ջեմ, օշարակ, զովացուցիչ ըմպելիքներ, կոնֆետներ: Հյութն օգտագործվում է գինու արտադրությունում: Թարմ տերևից և մատղաշ ճյուղերից պատրաստում են կիտրոնի բույր ունեցող բուժիչ թեյ, որն օգտակար է ստամոքսահյութի ցածր թթվայնության դեպքում:

Բույսը կիրառվում է ասթենիայի և դրա հետևանքով առաջացած դեպրեսիայի, հյուծվածության, ցածր ճնշման, սակավարյունության, ցածր մթնոլորտային ճնշման դեպքում: Կիտրոն չինականի ավելի խիտ ոգեթուրմն օգտակար է աչքի զգայնությունը բարձրացնելու համար՝ այն դեպքում, երբ մարդը չի կողմնորոշվում գիշերային ժամերին:

Ժողովրդական բժշկության մեջ սերմը և հյութն օգտագործվում են ստամոքսի խոցի և դիզենտերիայի բուժման համար, չոր տերևը և կեղևը՝ լնդախտի դեմ: Դժվար ապաքինվող վերքերի և տրոֆիկ խոցերի բուժման համար, բացի փոշուց, եփուկից և ոգեթուրմից, կիրառվում է նաև յուղամզվածքը:

Կիտրոնաթփի պտուղը և դրանից պատրաստված սննդամթերքն ու դեղորայքն ունեն ադապտոգեն՝ ախորժաբեր, ուժերը վերականգնող հատկություն: Եթե մարդը հիվանդ է, ապա բույսի թե՛ պտուղը, և թե՛ սերմի, տերևի, ընձյուղի կամ կեղևի պատրաստուկները կարելի է ընդունել միայն բժշկի թույլտվությամբ:

Մեզ շրջապատող սենյակային բույսերը

Ծաղիկները ոչ միայն գեղագիտական բավականություն են պատճառում, այլև դրանց համար շատ կարևոր է մարդու սերը: Դրանք երախտապարտ են նրան, ով սիրում ու հոգ է տանում իրենց մասին, դրա փոխարեն առողջություն են պարգևում, մաքրում մարդու էներգետիկան բացասական ազդեցությունից:

Ասում են, եթե սենյակում ծաղիկը հանկարծ հիվանդանում կամ մահանում է, կնշանակի պետք է փնտրել պատճառը. կա՛մ տան անդամներից ինչ-որ մեկը հիվանդացել է ու հիվանդությունը դեռևս չի արտահայտվում, կա՛մ էլ տանը բացասական էներգետիկա կա, որն այդ տան բնակիչներին վնասում է: Բույսերի աուրան բարդ է ու բազմաշերտ:

Գիտե՞ք արդյոք, թե որ ծաղիկները կարելի է պահել ննջարանում, և հակառակը, որ ծաղիկներն են հակացուցված ննջարանում և ընդհանրապես՝ սենյակային պայմաններում պահելու իմաստով: Լավ տրամադրությունն ու ինքնազգացողությունը պայմանավորված են սենյակային բույսերի ազդեցությամբ, քանի որ դրանք բարելավում են տարածքի միկրոկլիման, նպաստում օդի զտմանը, փոշու նստեցմանը, բարձրացնում օդի խոնավության մակարդակը, նվազեցնում նրանում առկա ածխաթթու գազի պարունակությունը, «դուրս բերում» վտանգավոր խառնուրդները, նպաստում սթրեսից ազատվելուն: Ավելին, բույսերն իրենց էներգետիկան ունեն, դրական ու մաքրող: Կենսաֆիզիկոսները, կենսաբանները, նրանք, ովքեր բույսերի վրա փորձեր են կատարում, չեն դադարում զարմանալուց, թե որքան դրական ներուժ ունեն սենյակային ծաղիկները:

Ննջարանի համար հաջող տարբերակ է համարվում բավականին խոշոր չափսերով մեկ կամ երկու տեսակի բույսի տեղադրումը: Խուսափեք ծաղկային կոմպոզիցիաներից: Ննջասենյակի համար նախապատվությունը պետք է տալ ոչ քմահաճ բույսերին: Դրանք չպետք է լինեն պահանջկոտ, ասենք՝ խոնավության նկատմամբ: Այդ առումով, հարմար են ֆիկուսի տեսակները, ասենք՝ բենջամինը, կաուչուկատուն: Ֆիկուսների մեծ մասը պահանջկոտ չէ խնամքի առումով, հաջողությամբ չեզոքացնում է օդի վնասակար տարրերը, բացի այդ, ներդաշնակվում է բոլոր ոճերին: Ֆիկուսներն օժտված են հզոր, բայց և մեղմ էներգետիկայով, վերացնում են նյարդայնությունը, ստեղծում հարմարավետության ու ապահովության զգացում:

Ասում են նաև, որ եթե ցանկանում եք շրջապատում ձեր մասին հաճախակի լավը մտածեն, պետք է ծաղկամանը դնել լուսամուտագոգին: Այս առումով, ազալիան շատ օգտակար բույս է տանը: Այն բարելավում է տեսողությունը: Դրա համար հարկավոր է օրական 10-15 րոպե կես մետր հեռավորությունից նայել ծաղկող ազալիային: Այն բարերար ազդեցություն է ունենում հյուրընկալ մարդկանց վրա, աշխուժություն ու առողջություն պարգևում: Ազալիայի մեծ, ծաղկող թուփը խոսում է ընտանեկան բարեկեցության մասին: Տանել չի կարողանում ծխախոտի ծուխը. դրանից ծաղիկն իսկույն թոշնում է: Գուցե տարօրինակ թվա, բայց ազալիան սիրում է, երբ իր հետ խոսում են:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՎԻՏԱՄԻՆՈՋ

Գարնանը, երբ բնությունն արթնանում է ձմեռային քնից, և արևն ավելի է ջերմացնում, շատերը, բնության զարթոնքից ուրախանալու փոխարեն, որոշակի անհարմարություն են զգում: Նրանց մոտ դիտվում է վատ տրամադրություն, քրոնիկ հոգնածություն, դյուրագրգռություն, ինչպես նաև տարբեր հիվանդությունների հանդեպ ընկալունակության բարձրացում:

Բացատրությունը շատ պարզ է. մեր օրգանիզմն վիտամինների պակաս է զգում, որն առաջացել է ձմռան ընթացքում: Այս երևույթը կոչվում է գարնանային ավիտամինոզ: Ավիտամինոզը հիվանդություն է, որն առաջանում է օրգանիզմում այս կամ այն վիտամինի անբավարարության պատճառով: Ավիտամինոզ անվանում են մարդու օրգանիզմում որևէ վիտամինի կամ վիտամինային խմբի լրիվ բացակայությունը:

Գարնանը օրգանիզմի պաշտպանական ուժերը թուլանում են և հնարավորություն չեն տալիս դիմակայել տարբեր հիվանդությունների, որոնք հիպովիտամինոզի դեպքում, շատ ավելի դժվար են բուժվում և կարող են քրոնիկ բնույթ կրել:

Գարնանը մեծանում է լուսային օրվա տևողությունը, արևի ակտիվությունը և երկրագնդի մագնիսական դաշտի լարվածությունը: Որպես հետևանք՝ բարձրանում է մարդու նյարդային համակարգի ակտիվությունը, դիտվում է հորմոնների գերարտադրություն: Օրգանիզմն ասես վերակառուցվում է՝ այս ընթացքում դառնալով զգայուն տարբեր անբարենպաստ ազդեցությունների, այդ թվում՝ եղանակային տատանումների հանդեպ: Այս ամենը բերում է դիմադրողականության անկմանը, հենց այդ պատճառով էլ գարնանը դիտվում են՝ վերին շնչուղիների, թոքերի, ստամոքսաղիքային համակարգի բորբոքային հիվանդություններ և ալերգիաներ:

Հիպովիտամինոզն ավելի սպառնում է երեխաներին ու ծերերին, ալկոհոլի և ծխախոտի սիրահարներին, հղի կանանց և կերակրող մայրերին, խիստ սննդակարգերի սիրահարներին և բուսակերներին, սուր վարակային հիվանդություններ տարած մարդկանց և քրոնիկ հիվանդություններ կրողներին, ինչպես նաև նրանց, ովքեր ունեն մտավոր և ֆիզիկական խիստ ծանրաբեռնվածություն:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
2015 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ագրոլրատու»
թերթի

1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ամսագրի

1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ափտաշե» կազմակերպությունները

Ագրոլրատու
AGRONEWS

Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության
հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար՝ Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և
համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 7
ստորագրված է տպագրության 16.02.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա